



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԱԻՏԵՏ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԵՐ. ՌԸՆԷ ԼԵՈՆՆԵԱՆԸ

Չորեքշաբթի, 22 Հոկտեմբեր 2008ի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Հայ Աւետարանական Համայնքի Համաշխարհային Խորհուրդի Հայաստանի ներկայացուցիչ Վեր. Ռընէ Լեւոնեանի: Հիւր հոգեւորականը Ազգ. Առաջնորդարան առաջնորդած էին Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան նախագահ Վեր. Յովսէփ Մաթոսեան եւ Վեր. Աբրահամ Չափարեան, ընկերակցութեամբ Ամերիկայի Հայ Աւետ. Եկեղեցւոյ ընկերակցութեան պատասխանատուներէն Տիար Տիգրան Եւմուշաքեանի (արեւելեան շրջանէն):

Հանդիպումը առիթ եղաւ փոխադարձ ծանօթացման ու հոգեւոր ծառայութեան մասին տեղեկութեանց փոխանակման: Նկատի ունենալով, որ Վեր. Լեւոնեան եւ Տ. Եւմուշաքեան առաջին անգամ ըլլալով կ'այցելէին Ազգ. Առաջնորդարան, Առաջնորդ Սրբազանը ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց Ազգ. Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ գործող եկեղեցիներուն, Ազգային Վարժարաններուն ու միաւորներուն տարած ազգանուէր ու սերնդակերտ աշխատանքը: Ան նշեց, որ այս տարին Արեւմտեան մեր Թեմի հաստատման 35րդ տարեդարձն է, ու այս առումով, ան լուսաբանութիւններ տուաւ թեմի աճին ու առաքելութեան դաշտերու տարածման մասին:

Վեր. Ռ. Լեւոնեան, իր կարգին, մանրամասնութիւններ տուաւ Հայաստանի մէջ Հայ Աւետ. Եկեղեցւոյ վերահաստատման ու հոգեւոր ծառայութեան տարածման մասին: Ան յայտնեց, որ Հայաստանի անկախութեան վերահաստատումէն ետք, Հայ Աւետ. Եկեղեցին, իր կարգին, վերսկսած է Հայաստանի ու Արցախի մէջ իր ծառայական գործը, որ ընդհատուած էր Հայաստանի խորհրդայնացման հետեւանքով: Ան անդրադարձաւ Հայաստանի Հայ Աւետ. համայնքներու կեանքին, եկեղեցիներուն ու ժողովուրդին եւ որբերու տրամադրուած ինամքին, նշելով, որ այս աշխատանքները յաճախ կը կանգնին նիւթական, գործնական եւ այլ դժուարութիւններու դիմաց, այսուհանդերձ, եկեղեցին կը գործէ տարբեր խոչընդոտներ յաղթահարելու եւ ժողովուրդին ու հայրենիքին ծառայելու կամքով:

Հանդիպումի ավարտին, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում: Առաջնորդ Սրբազանը բարի երթ մաղթեց հիւր հոգեւորականներուն ու յատկապէս հայրենիքի մէջ անոնց ծառայութիւններուն:

**PRELATE WELCOMES ARMENIAN EVANGELICAL WORLD
COUNCIL REPRESENTATIVE IN ARMENIA
REV. DR. RENE LEONIAN**

On Wednesday, October 22nd, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Armenian Evangelical World Council Representative in Armenia Rev. Dr. Rene Leonian and accompanying guests Minister to the Armenian Evangelical Union Rev. Joe Matossian, Rev. Abraham Chaparian, and Armenian Missionary Association of America Administrative Director Mr. Dikran Youmoushakian.

The meeting offered the opportunity for the exchange of information between the Prelate and guests regarding the endeavors of their respective churches. Given it was the first visit of Rev. Dr. Leonian and Mr. Youmoushakian to the Prelacy, the Prelate conveyed to them the work that is carried out by churches, schools, and various councils and committees serving under the jurisdiction of the Prelacy, and noting that the 35th anniversary of the Prelacy will be celebrated this year, highlighted the accomplishments of the past three decades.

Rev. Dr. Leonian spoke in detail of the reestablishment of the Armenian Evangelical Church and the expansion of their mission in Armenia and Artsakh following their independence over a decade ago, as well as of the challenges they at times face in this regards and means of overcoming these obstacles to better serve the Armenian people.

The meeting concluded with the exchange of mementos.